կանգնելով՝ գոչեցին, կեցցէ։ Կարա Մուրզայի խումբը երգեց «Տէր կեցո զթագաւորն»։ Ապա Նահանգապետն առաջարկեց Վեհափառ Հօր կենացը։ Յետ այնր Նորին Սրբութիւնն առաջարկեց Հայոց ազգի և առանձնապէս Բագուի Հայոյ կենաց։ Ապա ձայնագրութեան ուսուցիչն և երգիչներն երգեցին ազգային երգեր, և բազմականքն ուրախացան սրբոյն վայելն էր և պէտք. յետ այնր Վեհափառ Տէրն հացն օրհնեց և մնաք բարեաւն ասելով՝ վերադարձաւ տուն հանգստանալու և ամենքը ուրախ ուրախ ցրուեցան։

Երեկոյեան Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց Եպիսկոպոսաց և Արքեպիսկոպոսաց հետ, նոյնպէս և քանի բարձրաստիճան աշխարհականաց հետ շոգենաւով գնալ ծովի միջից բղխող կրակները տեսնելու, որին բագուեցիք «Ծովի կրակ՝)» անուանեն։ Տեսանք և զարմացանք, երբ լուցկին վառած ձգելով ջրի վրայ՝ ամբողջ շոգենաւի շրջապատը բոցի նման կրակ էր երեւում։

Այս տեսարանովը բաւական զուարճանալով՝ վերադարձանք քաղաք, որ աստղալից երկնքի նման 5—6 վերստ հեռուից երեւում էր. ընդառաջեցին մեզ ուրիշ շոգենաւով Հայոց երգեցիկ խումբը երգելով։ Երկուշաբթի հոկտ. 24ին կէս օրուան 12 ժամին Նորին Վեհափառութիւնը այցելեց եկեղեցիքը, և քաղաքամիջի հին եկեղեցւոյ մէջ օրհնելով շուրջ ժողովուած հասարակութեանը, նստեց կառքը և գնաց օրիորդաց Մարիամեան գիմնազիան ուղեկցութեամբ քաղաքագլուխ Պ. Դեսպօտ Զինովիչի, Մարդասիրական Ընկերութեան նախագահ Պ. Ռ. Անտոնեանցի և այլ պատուաւոր քաղաքացւոց։ Նորին Վեհափառութեան հետն էին Գերապատիւ Թադէոս ու Մեսրովբ Արքեպիսկոպոսներն, գաւազանակիր Սահակ վարդապետը և իւր առանձին յանձնարարութեանց աստիճանաւորը Պ. Ի. Մելիք Ադամեանցը։ Գիմնազիայի փառահեղ դահլիճում արդէն խմբուած պատրաստուած էին բոլոր

---

[1])Ծովի կրակ ասուածը Բագուի հետաքրքրելի տեսարաններից մէկն է, որ է ծովի միջից ինքնաբուղխ դուրս եկող նաֆթը, որ լուցկիով վառելովներկայացնում է գեղեցիկ տեսարան հրաբխային՝ մանաւանդ գիշերները։ Այս տեսարանը գտնում է Զիրա (Պարսկերէն) կամ Նարկին (Թուսերէն) կղզու մօտ՝ որ է Բագուեցւոց զբօսարանը։